

ՄԵԼԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мпакт».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չափազանց հովանաւորութիւն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եսամու մարդիկ. Անաջող հունձ Նոր-
Քաղաքի դատարան. Նամակ Օրդուբադից. Նա-
մակ վարչակալից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արդու-Քաղաքի Եֆէնդիի փախուստը.
Արեւելեան պատերազմ. Նամակ Աւստրիայից. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՊԱԿԱՆ. Մի քանի
գիրք արհեստագործների կեանքից.

ՉԱՓԱՉԱՆՑ ՀՈՎԱՆԱՌՈՒԹԻՒՆ

Ամերիկայի անտեսական կեանքում վեր-
ջին տարիներս տեղի ունի մի խոշոր երե-
ւոյթ, որ իր ուսանելի կողմերով մեծ նշա-
նակութիւն է ստանում և ուրիշ երկրների
համար. Մեր խօսքը հովանաւորող քաղաքա-
կանութեան այն չափազանցութիւնների մա-
սին է, որ թոյլ տուեց Ամերիկան իր տն-
տեսական քաղաքականութեան մէջ:

Ահա բանը ինչու՞ն է:
Ամերիկացիները, որպէս զի կարողանան
զարգացնել և ուժեղացնել իրանց երկրի
գործարանական արդիւնաբերութիւնը, վեր-
ջին դժուարացնել ուրիշ երկրներից ե-
կող ապրանքների մուտքը դէպի Ամերիկա,
և այդ պատճառով այդ ապրանքները վրա
մաքսեր դրին այնպիսի մեծ չափով, որ օ-
տարերկրեայ արդիւնագործողները կամ
պէտք է փնտրուէին իրանց ար-
դիւնները, կամ իսպառ. հրաժարվէին նը-
րանց Ամերիկա ներմուծելուց:

Այդ ուղղութիւնը, այդ քաղաքականու-
թիւնը իր գաղաթնակէտին հասաւ 1890
թվին, երբ ընդունվեց Մակ-Վինլէյի հոգե-
կաւոր, բայց և չարաբախ ծրագրերը, որով
ծայրայեղ կերպով բարձրացրին ապրանք-
ների վրա մաքսերը, այն է 50—100% և
ուելին:

Այդ մաքսերի պատճառով երկրին ընկա-
նական ամենաճանր վիճակի մէջ. Այ-
րանքները սաստիկ թանկացան, մարդկանց
տարեկան ապրուստը դժուարացաւ, բան-
ւոր դասակարգի օրավարձը, որ պէտք է
բարձրանար, չը ստացաւ զգալի փոփոխու-
թիւն, և այդ օրավարձով անկարելի
էր գոնէ այնպէս ապրել, ինչպէս ապ-
րում էին մաքսեր սահմանելուց առաջ:
Մարդիկ հաշուեցին և տեսան, որ այն
գոհը, որ բերում է ամբողջ երկիրը իր մի
քանի արդիւնաբերութիւնները զարգացնե-

լու համար, շատ մեծ է, շատ ծանր է
ազգայնականութեան համար: Ամերիկական
մամուլը, որ անգաղար խօսում է այդ ա-
ռաքելայի մասին, հաշուէ է, որ երկիրը մի-
լիարդներ է զոհում գործարանական ար-
դիւնաբերութեան զարգացման համար, մինչ-
դեռ այդ զարգացումն էլ նշանաւոր քայլեր
չէ անում, որովհետեւ թանկ գին ունեցող
ապրանքների ապաւոյ չը կայ:

Այժմեան նախագահ Կլիվլենդը վաղեմի
թշնամի է հովանաւորող քաղաքականու-
թեան, նա այն համոզմունքն ունի, որ ժո-
ղովրդի մեծամասնութիւնը, ապրանքներ
գնողը, ապաւոյդ պէտք է դիւրութիւններ
ունենայ իր անտեսական կեանքում, և որ
արդիւնագործութեան զարգացումը առաջ
տանելու համար պէտք է որոնել այլ մի-
ջոցներ: Կլիվլենդը կարողացաւ պատգա-
մաւորներ ժողովի միջոցով անցկացնել իր
նոր ծրագիրը, որով շատ սահմանափակ
վում է մաքսային ծանրութիւնը, բայց սե-
նատը, որի անդամների մէջ շատ կան դո-
ճարանատէրերի բարեկամներ, սկզբում հա-
կառակեց, իսկ յետոյ, միայն հասարակական
կարծիքի ճնշման տակ, զիջեց բաւա-
րանաչափ, և այդպիսով դատապարտեց մին-
չև այժմ ընդունված քաղաքականութիւնը:

Այս տարվայ սկզբում, ինչպէս յայտնի է
մեր ընթերցողներին, Ռուսաստանը և Գեր-
մանիան միմեանց փնտրող մաքսային չափա-
կանութիւններին վերջ դրին՝ փոխադարձ
գիշնեմներ անելով միմեանց: Նրանց համոզ-
վեցին, որ հովանաւորող մաքսային քաղա-
քականութեան հետ շատ զգոյշ պէտք է
վարվել, որովհետեւ եթէ մի երկիր կարող է
անփնշ աւելացնել մաքսերը, նա պէտք է
գիտնայ, որ իր հարեան երկրներին էլ
կարող են նոյնպէս անփնշ մեծացնել ի-
րանց մաքսերը. մինչդեռ ժողովրդի մեծա-
մասնութիւնը, ապրանքներ ապաւոյդ վը-
նաւում է մէջտեղ, ստիպված լինելով ապ-
րել շատ թանկ կեանքով կամ հրաժարվել
իր պիտոյքների մի մասին բաւականութիւն
տալուց:

Ամերիկայի հասարակական կարծիքի մէջ
մաքսերի վերաբերութեամբ կատարված այդ
մեծ փոփոխութիւնը շատ նշանաւոր երե-
ւոյթ է և եւրոպական մաքսաւերները յաճախ
վկայութիւն են բերում ամերիկացիների
կեանքից և այդպիսով ուժեղ ապաւոյդութիւն
գործում մարդկանց վրա և ուղղութիւն
տալիս անտեսական-քաղաքական գործերին:
Ժամանակ է, որ ծայրայեղ հովանաւորող

քաղաքականութեան վերջ դրվի և սպա-
ռողի վիճակը մեծ տեղ ունի քաղաքագէտ-
ների և անտեսագէտների ծրագրերում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՍՄՈՒ ՄՈՐԳԻԿ

Կան մարդիկ, որոնց համար կեանքի միակ
խորհուրդը իրանց է սն է: Այդ է սի չուրջը պը-
տեւում են նրանց հայեացքներն ու գաղափար-
ները. այդ է սի ծառայում են նրանց միտքն ու
զգացմունքը, նրանց սիրտն ու հոգին: Եւ ինչ-
նայն դեպքում է կեանքի մէջ, հասարակական
գործերում. և սը նրանց զինքն է գաղափարի
կուում, հասարակական վեճերում: Եւ ինչ դուրս
նրանք ոչինչ չեն տեսնում և չեն էլ ուզում տես-
նել, որովհետեւ, ինչպէս Տուրգենևի սուր կերպով
նկատում է, եսաւէր մարդը «ամբողջապէս, ամեն
կողմից—ներքեց ու վերեց, ետեւից ու առջեց»
չըջապատված է միայն ինքն իրանով:

Եւ այդպիսի մարդիկ հասարակական կեանքը
մտնելով, հասարակութեան անդամ դառնալով,
տեսնում էք այնպէս են պահում իրանց, այնպի-
սի ընթացք են ընում գէպի նոյն հասարակու-
թիւնը, գէպի նրա շահերը, որ կարծէք իրանք են
աշխարհիս տէրը, իրանք են երկրի աղը: Նրանք
թշնամի են դառնում համերաշխութեան քաղա-
փարին. նրանք երես են դարձնում համակամ,
համադժ գործունէութիւնից: Խոնարհվել հասա-
րակական պահանջների առաջ, յարգել հասարա-
կական պարտաւանաւորութիւնը, մի շարքում կանգ-
նել հասարակութեան ծառայող բազմաթիւ այլ
անդամների հետ, շատերից մէկը լինել ընդհանու-
րի մէջ, ընդհանուր գործում,—այդ հայեացքէն
եւամոռններն թվում է ատելի, այդ սկզբունքը—
զղկուտ չափ՝ անախորժ:

Եւ անմատչելի գաճ չինած է իրանք էլ վրան
բաղված՝ այդ մարդիկ պահանջում են չըջապա-
տողներից հլու հպատակութիւն, ծախ ու գովաւո-
ւորանքներ են խոսել ու բուրբոս, անպայման
յարգանք, խորին ակնածութիւն գէպի իրանց ան-
ձը, իրանց գործը, իրանց ամեն մի քայլը: Փոր-
ձեցէ և ս ու կուրացած մարդկանց ասել թէ կան
ձեզանից բարձր, ձեզանից մեծ, ձեզանից խելօք
ու օգտակար մարդիկ. փորձեցէք—և դուք կը
տեսնեցէ, թէ որքան փրկուր կը ժայթքէ նրանց
բերաններից, որքան արիւն կը կոխէ նրանց աչ-
քերը: Ինչպէս կարելի է յանդգնել ու այդպիսի

մի պարզ ճշմարտութիւն տեսլ նրանց երեսին
Հակայական եւր նրանց համար անսպառելի աղ-
բուր է և մեծամտութեան, և ինքնահաւանութեան,
և ցուցանողութեան:

Իսկ եթէ բաղդի բերամուր, կամ այս ու այն
հնարքներով մարդկանց այդ անաղին ետին միա-
նում է և անագին հարստութիւն, փող,—այն ժա-
մանակ Տէրն ինքը փրկէ ու աղատէ: Այստեղ եր-
կաթէ ամեն անգամ անգոր է այդ մարդկանց
զսպելու: Եւն ու փողը էլ ոչ ամօթ են հարց-
նում, ոչ պատկառանք: Եսամու կրեոսոնները սան-
ձարձակ ներս են պրծնում ամեն մի հասարակա-
կան գործի մէջ, ճգնում են մեղքնել կամ տակն
ու վրա անել ամեն բան... Նրանց համար չը կայ
ոչ օրէնք, ոչ կարգ ու կանոն, ոչ բարոյական
պարտաւանաւորութիւն: Օրէնքն էլ, կարգ ու կա-
նոնն էլ իրանք են, իրանց խօսքն է, իրանց կա պ-
րիզն է: Հասարակաց ձայն, ժողովրդի իրաւունք
—նրանց համար դատարի բաներ են: Որքան ու-
ղում է թող արդար լինի այդ ձայնը, թող օրի-
նական լինի այդ իրաւունքը, եթէ նրանք թու-
լացնում են այդ մարդկանց ետի ոյծը, ջախջա-
խում են նրանց անախտութիւնը,—գոյութիւն
չունեն: Այդ մարդիկ ոտը դնելով հասարակական
կեանքում, յաւակնութիւն ունենալով հասարա-
կութեան գործող, օգտաւոր անդամ հանդիսանալ,
տարակոյս չը կայ, որ նրանք պէտք է ընթանա-
լին հասարակութեան հետ զուգընթաց, ձեռք
ձեռքի տուած, պէտք է լսէին նրա ձայնը, պէտք
է համադրաց լինէին նրա ցեւերին, նրա դարձե-
լին, որպէս ցեւակից, որպէս բարեկամ: Բայց ե-
ւր նրանց թոյլ չէ տալիս ձուլվել, մի սիրտ, մի
հոգի լինել հասարակութեան հետ, իրանց ձայնը
միացնել ընդհանուրի ձայնին:

Հասարակ էլ ինչու այդ ցեցերը՝ հասարակական
շահերին ծառայելու կեղծ դիմակը երեսներին,
այնպէս զլխապատառ նետվում են հասարակու-
թեան գիրկը,—արդար զայրոյթով անշուշտ կը
հարցնէ ընթերցողը: Ահա ինչու Նրանց հարկա-
ւոր են կենդանի մարդիկ, որոնց կարողանան կո-
կորդիլոսի արտասուքներով, սուտ սրտացաւու-
թեամբ խաբել, որաւ, ստրկացնել և իրանց
ձեռքն աւանդ աւել մարդկանց հասարակական
կեանքի դեկը. նրանց հարկաւոր են ասպարէզներ,
որ կարողանան անդուստլ խորխուր և աղատ յա-
գուրդ տալ իրանց ետին, իրանց անախտու-
թեան իսկ յայտնի է, որ կեանքից ու մարդկա-
յին հասարակութիւնից հեռու, ամայի անապա-
տում ոչ կարելի է մեծ մարդ դառնալ, ոչ փառք

ԲԱՆԱՍԻՊԱԿԱՆ

ՄԻՔԱՆԻԳՐԻԿ

ԲԱՆԱՍԻՊԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

III

Արհեստագործ, մանաւանդ թէ սիրող ար-
հեստագործ փողի մեծ կարգը, անպիտանելի
պէտք ունենում է գլխաւորապէս երկու դէպ-
քում: Մէկ այն ժամանակ, երբ ընկերները յան-
կարծակի յայտնում են, թէ հիւր են գալու, որ
սովորական բան է, և մէկ էլ թունդ խաղի,
թունդ թէքի ժամանակ, որոնք օրերով շարու-
նակվում են: Թէկուր ինչ տեսակ թէք լինում է
լինի, եթէ արհեստագործի գրգռում փող չը կայ,
նա չի գայ և մասնակից չի լինի: Շատ սերտ,
շատ մտքով ու անկեղծ ընկերներ պէտք է լինեն,
որ արհեստագործը առանց քաշվելու, առանց յետին
մտքի, դատարկ գրգռումը դնայ և սեղանակից լի-
նի: Ընդհանրապէս պէտք է գրգռում փող ու-
նենայ, որ եթէ մէկ, երկու, երեք ընկերներն են
հիւրասիրում, գինի, արաղ բերել տալիս, մէկ էլ
դոնէ ինքը բերել տայ, ինքը խաղի:

Այսպիսի «անհրաժեշտ» համարված դէպքե-
րում պարտք են վերցնում: Բայց ոչ պէտք է
վտանգանայ պարտք տալ այն արհեստագործին,
որ միշտ աշխատում է, աշխատում, դարձեալ ջէրը
դատարկ, դարձեալ առանց փողի:

Խնդրում, աղաչում, պաղատում է, մէկին եր-
կու է խոստանում վերադարձնել, դարձեալ շատ
անգամ չէ կարողանում ձեռք բերել: Ինչպէս
ամեն չըջանի, ամեն դատակարարի մէջ, նոյն-
պէս և արհեստագործների մէջ կան համեմա-
տաբար փողաւորներ, որոնք այսպիսի դէպքերից
լաւ օգուտ են քաղում:

Եթէ պարտք վերցնողը յուսալի մարդ է, տալիս
են, բայց մէկին երկու հաշուով: Եթէ գումարը
փողը է և կարճ ժամանակով, օրինակ, մի քանի
օրով, այն ժամանակ ստացադիր չէ լինում, տա-
լիս են առանց որ և է գովաւորնոր, սակայն ան-
խիղճ պայմաններով: Գիշուր մի շարքով 5 ռ-
փող է վերցնում. մի շարքով յետոյ պարտա-
ւորվում է վճարել ոչ 5 ռուբլի, այլ 7—8 ռուբ-
լի: Բուրյուն 30, 50 և 60 կոպէկ վերցնելը սո-
վորական բաներ են: Ամիսներով փող պարտք
պէս 5—10—15 օրով են վերցնում: Եթէ գումար
ըր մեծ է, 15—30 ռուբլի է, այն ժամանակ

մուրհակ են տալիս նախօրէն վերադիրն էլ վը-
րան դալով: Ստանում է իսկապէս 15 ռուբլի,
բայց մուրհակը գրում է 25 ռուբլու... Տղիւ-
սի չափը կախված է կարգի աստիճանից և փող
տուողի բարեհաճ կամքից:

Բացի անխնայութիւնից շատ անգամ և չարա-
մտութիւն են գործ դնում:

Չեղքին փող ունեցողը գնում, սրա, նրա, աւե-
լի խեղճների ճաշակը զրգում է և յորդորում
խաղալ, իսկ ինքը առաջարկում է փող: Փողը
տալուց յետոյ տանում մի քիչ էլ հիւրասիրում
է, յետոյ սկսում են խաղալ: Փողաւորի բիւսը մի
կողմից, խաղալու վարպետութիւնը միւս կող-
մից, կրկին ձեռքերից յետ են խլում տուած փո-
ղը և պարտքի տակ գցում...

Արեւելոյթեան հետեւանքի շօշափելի արդիւն-
քը՝ վեներական հիւանդութիւնը մեծ
ծաւալ է ստացել նաեւ արհեստագործների շրջա-
նում. այդ անտույլ վարակված են ոչ միայն ա-
մուրհակը, այլ և ամուսնացածները շատերը:
Թմրած դուրեղ, զրգոված կիլքը խորութիւն չէ
դնում, տանում է, ուր հանում է... Իսկ այդ
տեսակ հասնելիս, հասարակ դատակարարի հա-
մար մատչելի տեղեր, որքան կամենաք, ամեն մի
անկիւնում, ամեն մի քայլում:

Բացի նրանից, որ ամեն մի «գարնջատուն»
ունի այդ բաները, բացի նրանից, որ ամեն մի
«հիւրանոց» պահում է մի քանի կանայք, ո-
րոնք անսպառելի կերպով, սրա կամ նրա ճա-
նապարհն են կտրում, այլ և փռված են այդ-
պիսի զուարճալի տեղերի շուրջը էմանալիս
շնոթեր—ներ, ուր կուտակված ապրում են զեղ-
խութեան մէջ թաթախված կանայք: Գրանք—
այդ ընկանքները—չունեն որոշ պարագմունք, ապ-
րում են, համեմատաբար, հեշտ միջոցով՝ «ան-
պատիւ վաճառքով»...

Աւելի սոսկալիս այն է, որ այդպիսիները պաշ-
տոնապէս չեն ճանաչվում «արտեսագործներ»,
և այդ պատճառով առանց կոնտրոլի, առանց
հսկողութեան են մնում: Եւ ինչ քառմանի դէպ-
քը են տեղի ունենում այդ զեղխանցների շուր-
ջը:

Երեւակայեցէ, որ ցերեկով, երբ ուզում էք
անցէք այդպիսի տեղերի մօտով և դուք կը նկա-
տէք անշուշտ մէկ կամ մի քանի կանայք, որոնք
անցողաբար անդններն լինի թուրք, հայ և այլ-
աղիկ հիւր: Եւ հրաւիրում Նրանք, ի հարկէ,
դիտեն իրանց մարդկերանց, իրանց հրաւերը զը-
խաւորապէս ուղղում են հասարակ դատակար-
դին, բայց հարբած ժամանակ խորութիւն չեն

ու գովեստ վաստակելու նպատակները ընդհանուր միջոցառման պահանջով, միջոցառման օրինակական բարձրությունը նշանակում է ժողովրդի, ամբողջի վրա, իրանց համարում են հասարակության ընտանիք, արտադրության անդամներ: Հասարակության մեջ նրանց հաւասարել, նրանց ուղարկության արժանին մի-միայն իրանց նմաններն են: Մնացածները... մը-նացածները—ընդ: Ուսումնական թէ մասնագիտ, ուսուցիչ թէ ուսանող, մանր վաճառական թէ գործակալաւոր, արհեստաւոր թէ մշակ,—ընտանք լուրջն էլ նրանց աշխատանքները մարդիկ են, մարդիկ, որոնք կարծես պէտք է միայն գլուխ խոնարհեն նրանց ետին, պէտք է կանգնեն, երբ նրանց կանգնելը, պէտք է նստան, երբ նրանց կանգնելը—նստելը...

Իշխել ամեն տեղ և ամենքի վրա, եղանկի հանդիմանալ ամեն մի հասարակական գործում,—ահա եւսամոլները դէպքի դէպք:

Այդ տիպի մարդիկ, որպէս անխուսափելի չափի, ապրում են ամեն մի հասարակութեան, ամեն մի ազգի մէջ, ամենաւանգը երբ այդ հասարակութեանը, այդ ազգի ղեկավարները են, ղեկավար է դարձնում, նոր է դիմում դէպքի քաղաքակրթական կենտրոն:

Դրանք անպակաս են և մեր մէջ, ղեկունները պէս խօսվում են և մեր կենտրոնում, քայքայիչ վերքերի պէս բռն են դրած և մեր հասարակական օրգանիզմի մէջ...

Ա. Մ.

ԱՆԱՋՈՂ ՀՈՒՆՁ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻ ԳԱՆՈՒՌՈՒՄ

Հացի բերքը այս տարի ևս չէ պահպանել հողագործների այն յոյսը, որ նրանք ունեւին Ամառվայ ամբողջ երեք ամսում այդ գաւառի ցանքները մի լաւ անձրեւի երես չը տեսան: Սարսափելի երաշտը՝ թղթալի բաժնուկներում հացաբույսը արմատի վրա չբացրեց, հատունացրեց: Հացաբույսը այնքան կարճ էր այս տարի, որ շատ արտեր անկարելի էր լինում գերանդրով հնձել, այլ այդպիսիները փետում են ձեռքով, որը համ շատ ժամանակ է պահանջում, համ էլ շատ բանորմեր, որոնք աշխատում են օրական 20—25 կօպէկով: Կանաք և աղիկները նոյնպէս մասնակցում են այդ աշխատանքին:

Այժմ ամբողջ հողագործ դասակարգը կայսում է իր հացաբույսը: Նախկին աւատ տարիներում 100 սայլ լաւ լինելու դեպքում ընտանիքը այժմ 10—20 սայլ ունի կայսելու, իսկ այն ժամանակվայ 10—20 սայլ արդիւնաբերողները՝ այժմ 1—2 սայլ ունեն միայն... Դրանք կարելի է պարզ հասկանալ, թէ ինչպէս հողագործական արդիւնքը, հացի բերքը գնալով պակասել է և խեղճ աշխարհ դասակարգին տնտեսապէս քայքայել, անանկացրել...

Մարդու վրա մի տեսակ տարօրինակ տպաւորութիւն է անում կարգուկարգի դրութիւնը: Ահա մօտենում էք մի կայանողի, «կամի» մի կողմը լծած է մի կողմ կամ մի եզր, իսկ միւս կողմում՝ մի էջ: Տախտակի վրա դրողը շատ ուղեւորով, բոլորովին ցնցոտիացած շրջերով, կիտա-մերկ կանգնած է մի փքր աղջիկ, որը իր թոյլ

ձեռքում բռնած ձիւղ ոտը հագել կարողանում է շարժել և մղկտան ձայնով «հօ հօ ջան, հօ հօ ջան» ասելով՝ բռնում է իր յամբաքայլ, մի-մեանց անհամապատասխան լծկաններին և հացաբույսը կայսում... Քանի որ երբ, որքան ժամանակ են հարկաւոր, որպէս զի այդպիսի խղճով կարողութեամբ կարողանայ իր հացաբույսը մանրացնել, դարմանի վեր ածել, քամել և նրանից դուրս իր ամբողջ տարվայ ուսուստը,—մի տօպրակ հացահատիկը...

Նոր-Բայաջէտի գաւառի հացի բերքը՝ ընդհանուր առմամբ վերցրած՝ միջակից քիչ պակաս կարելի է համարել. իսկ հացահատիկների համեմատական արդիւնքն է 3—40/0, այսինքն 1-ից ստացվում է 3—4 արդիւնք: Սակայն բանը նրանումն է, որ այդ գաւառում շատ ընտանիքներ բոլորովին ցանք չեն արել, ոչինչ սերմացու չեն ունեցել...

Նոր-Բայաջէտում 1100 ընտանիքներ, ինչպէս ցոյց են տալիս քաղաքային ստատիստիկական տեղեկութիւնները, 400 տունը ոչինչ չեն սերմանել, իսկ ցանողները, որոնք համեմատաբար մի փքր քանակով վիճակի մէջ գտնված են համարվում, փոխանակ 27,000 պուդ հացահատիկ սերմանելու, այս տարի ցանք են ունեցել 18,000 պուդ միայն... Դրանից կարելի է դուշա-կել և այն աղքատ գիւղացիների դրութիւնը, որոնք իրանց սերմացուն քառապատիկ գնելով փոխ են առնում վաշխառուներից...

Ընդհանուր տեղեկութիւնից երևում է, որ հողագործ դասակարգի մեծամասնութիւնը, թէ քաղաքում և թէ գիւղերում, 3—4 ամսվայ ուտելու հաց ունի միայն, իսկ ցանելու ոչինչ չունի: Այդ պատճառով երևանի նահանգապետի պահանջ-մամբ, «ցանք չունեցող» և առհասարակ աղ-քատ ընտանիքներին մասամբ օգնելու համար, ամսիս 11-ին քաղաքային ղեկավարատի սրահում մի ժողով կայացաւ, որտեղ գաւառապետի օգ-նականը դիմելով ժողովրդին՝ չքաւոր ընտանիք-ներին նպաստելու համար՝ այն կարծիքի եկաւ, թէ կամ պէտք է իրեն 10,000 ռ. փոխ առնել կատարվող ծրագրի՝ սերմացու և ուտելու հաց ձեռք բերելու համար, կամ թէ պէտք է բաւ-կանանալ հարկերը մի քանի տարի յետաձգելով միայն: Առաջին պայմանին ժողովրդի հարուստ մասը դէմ է, որովհետեւ քաղաքն արդէն 10,000 ռուբլի փոխ է վերցրել. եթէ այժմ էլ այդքան փոխ առնի, այն ժամանակ 20,000 ռ. պարտքը եկող տարիներում աղքատ դասակարգը ոչնչով չէ կարող վճարել, ուստի չքաւոր ընտանիքների փոխարէն իրանք՝ հարուստների ստիպված կը լինեն վճարելու, քանի որ փոխառութեան միջոց-ցում իրանք են երաշխաւորել չքաւորներին: Իսկ շատերը այդ ժողովում հաւանութիւն տուին հար-կերը յետաձգելու վերաբերմամբ: Սակայն ժողո-վում արծարծված հարցերը իրանց պատշաճաւոր-լուծումն չը ստացան, այլ յետաձգվեցին: Ի միջի-պլ հարցերի՝ դրված է և այն հարցը, որ այդ գաւառից ոչ ոք իրաւունք չունենայ հացահատիկ-ներ արտահանել դէպքի ուրիշ տեղեր:

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ՈՐԳՈՒԲԱԹԻՑ

Սեպտեմբերի 14-ին

Ամսիս 8-ին յայտնի աւազակ Նարին, իր աւազակային խմբով, կրկին անգամ յարձակվեց կար-ձեան գիւղի վրա: Աւազակի խումբը, ինչպէս պատմում են, բաղկացած է լինում 10 ձիաւոր-ներից և 30 հետակներէից:

Հաշից յետոյ, մօտ ժամի 3-ին, յանկարծ գիւ-ղի մօտ սարի քարաժայռում պայթում է մէկ հրացան և գնտակը ընկնում է գիւղի եկեղեցու մօտ հաւաքված մի խումբ զրոյց անող մարդկանցից երկու քայլ հեռու: Դրան անմիջապէս հետե-ւում է մի անգղին զրոյց և գնտակները կարկ-տի նման թափվում են գիւղը: Ոստիկանութեան կողմից նշանակված պահապան 6 կօզակները ի-րանց բնակարանից սկսում են պատասխանել քարի ետեւում ծածկված աւազակների գնտակա-հարութիւններին: Երբեք ծածկված գիւղացիները, հրա-ցան առնելով, իրանց տնիքի պատերի տակից նոյնպէս արձակում են գնտակները: Կանայք և մանուկները երկնայեան սուգ և աղմուկ են բարձ-րացնում: Մի քանի մարդիկ վազում են դէպի մօտակայ գիւղերը օգնութեան կանչելու:

Աւազակը, քարաժայռից դուրս գալով, պահանջում է իր եղբոր դիակը, որը սպանվել է կարճատևում նախկին յարձակման ժամանակ և այդտեղ էլ թաղված է, իսկ գիւղացիները մերժում են: Հրա-ցանաձգութիւնը տևում է 3—4 ժամ: Այդ միջոց-ին գիւղացիները 6 հոգի ծածկու է բարձրանում են աւազակների բռն դրած տեղին մօտիկ սարը և սկսում են այնտեղից, բոլորովին անտեսանելի կերպով, աւազակների վրա հրացաններ արձակել: Աւազակները, կարծելով թէ չըջապատված են թշնամիներով, յետ են քաշվում և անհետանում:

Տ.

ՆԱՄԱԿ ՎԱՐՇԱՎԱՅԻՑ

Սեպտեմբերի 6-ին

Այս տարի ապրիլ ամսին, ծանր հիւանդութիւ-նից յետոյ, արտասահմանից վարչապետ վերադար-ձաւ պրօֆէսոր Թումասը: Փոքր ի շատ իրան կազդուրված համարելով, նա վճռեց ամառը անց-նել քաղաքի մօտ ամառանոցներից մէկում, որ սեպտեմբերից կարողանայ շարունակել իր պաշ-տօնը: Տարաբաղադար, փոխանակ աւելի կաղ-դուրելու, նա նորից հիւանդացաւ յուրիս ամ-սում և թոքախտը իր բոլոր ոյժով սկսեց դու-րսել: Բժիշկները հասցրած օգնութիւնը ոչ մի ներ-գործութիւն չունեցաւ: Պրօֆէսորի անկողինը շըր-ջապատել էին իր ընկերները, բժիշկները, տիկին-Թումասը իր զաւակների հետ: Բոլորն էլ յուսա-հատված:

Պրօֆէսորը ինքը զգալով, որ եւթ չը կայ մահի ճանկերից աղաղակու, խնդրում է կատա-րել իր վերջին միակ խնդիրը.—հեռագրել էջմիա-ծին, Կաթողիկոսին, որ նա աղօթէ Ներսէս Զօ-րը՝ փրկել իրան մահից: Վարչապետն ալ Զօ-րաբեան ուրախութեամբ յանձն առաւ անմիջա-պէս կատարել մահամերձ հիւանդի վերջին խնդ-րը և հեռագրեց էջմիածին:

Անդուլութիւնը, որ բանիմաց բժիշկներին ձեռքով ժամանակին արմատախիլ պիտի լինէր, դիցուք, մի կամ երկու շաբաթվայ մէջ, դաւաքների ձեռքի տակ ամիսներ են քաշում, և դեղերի աննպաստի փոփոխութեան, տղիտութեան չնորձիւ աւելի և աւելի զարգանում, բարդանում և խոր արմատներ է ձգում: Օրինակները անթիւ են:

Այս և այն դեղի ազդեցութիւնից հիւանդու-թիւնը շատ անգամ փոփոխվում, ուրիշ կերպա-րանք է ստանում և կամ առժամանակ ծածկ-վում՝ աւելի անբելի կերպարանքով երևան դա-լու համար: Արհեստաւոր դիմում է բժիշկին մի-միայն այն ժամանակ, երբ այլ ևս չէ կարողա-նում դիմանալ, երբ դաւաքներից յոյսը կտրում է, երբ ուրիշ խօսքերով ասած, դանակը ոսկորին է հասած լինում: Այդպիսի դէպքերում էլ, տարա-բախտաբար, բժիշկները օգնութիւնը շատ անգամ ևս ի դուր է անցնում, և այս հանգամանքը ա-ւելի է նպաստում արհեստաւորի թերահաւատու-թեան դէպքի «զօլտուրները»...

Այս դասակարգից կան մարդիկ, որ տանջվում են ամբողջով, տարիներով մի հասարակ վնեւ-րական ախտից, և յուսահատված՝ այլ ևս միջոց-ներ չեն դիմում: Նրանք դիմել են բոլոր յայտնի դաւաքներին, օգնութիւն չեն գտել, դաւաքնե-

Ահա հեռագրի բովանդակութիւնը. «էջմիածին. Ամենայն հայոց Կաթողիկոսին: Վարչապետի հայոց կօծնիան անհաճութեամբ ա-ղերսում է Հայրիկին, աղօթել, որ Աստուած ա-ռողջութիւն չնորձէ համալսարանի պրօֆէսոր՝ ծանր հիւանդ Լազար Թումասին»:

Միւս օրը ստանում ենք վեհափառի պատաս-խանը էջմիածնից, հ. Ստեփանէի ստորագրու-թեամբ, հետեւել բովանդակութեամբ.

«Վեհափառ Կաթողիկոսը վշտացած է ձեր հի-ւանդութեան համար և սրտագին աղօթում է Ներ-սէսը Բժիշկին՝ առողջութիւն չնորձել ձեզ Հրա-մայեց Սուրբ Աթոռի միաբանութեան՝ վաղը ա-ղօթել ձեր առողջութեան համար»:

Մի քանի ժամանակից յետոյ հիւանդը ամառա-նոցից տեղափոխվեց վարչապետ Զաւարով, որ այլ ևս անկարող է շարունակել դասախօսել համա-լսարանում, դիմեց ժողովրդական լուսաւորութեան միջնադպրոցի արձակել իրան պաշտօնից: Միջնադ-րը արձակեց նրան պաշտօնից, ապահովեց ընդ միշտ թէ նրա և թէ նրա ընտանիքի ապա-գայ կենսը, նոյնպէս խոստանալով վերադարձ-նել նրան իր պաշտօնը, երբ նա ոյժ կունենայ նորից դասախօսելու համալսարանում:

Վարչապետը հիւանդը մնաց մինչև սեպտեմբերի 4-ը, յետոյ, բժշկական խորհրդակցութեան համա-ձայն, տեղափոխվեց Նալու, որտեղ պիտի մնայ ամ-բողջ ձմեռ: Հրաժեշտի օրը երկաթուղու կայարա-նում հաւաքվել էին ընկեր-պրօֆէսորները, բժիշկ-ները, ուսանողները և տեղիս հայ կօծնիայի ընտիր մասը: Բոլորն էլ ախտը էին, որ զաւանդում էին այնպիսի ընկերից, ինչպիսին Թումասն է:

Գ. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, ուրբաթ օր, երկրագործութեան միջնա-տոր Ներսէսը կը գայ Թիֆլիս, և կը մնայ երեք օր և ապա ճանապարհ կընկնի դէպքի Բաղու ու Անդրկասպական երկրի թիֆլիսում միջնադ-րը պէտք է ծանօթանայ իր լրագր-ներկայացուցիչ Մեղիշիկի դիւանատան գործունէութեան հետ, պէտք է այցելի Գիւղատնտեսական ընկերութիւ-նը և լսի ընկերութեան կարծիքը Անդրկով-կասի տնտեսական կարիքների մասին. ի մի-ջի այլոց պէտք է այցելէ չերամպայական կայարանները, այդեղծական դպրոցը, Կարապի-փորձական ագարակը և ունկնդրութիւն պէտք է նշանակի քաղաքային դուռնայ առաջնորդութեան՝ պօլիտեխնիկումի մասին և մի քանի ուրիշ ծրա-դիրների համար: Լուր կայ, որ միջնադ-րը կանմ-նում է ծանօթանալ Թիֆլիսի նահանգապետի կազմակերպած գիւղատնտեսական կապիտալի հետ:

Լուսում ենք, որ շուտով կարգադրութիւն պէտք է լինի՝ Կարին նահանգի մէջ գտնված դաւթա-կաններին յետ ու դար կը լու մասին: Կասկած չը կայ, որ ստիպված լինելով ձմեռվայ ամիս-ներին յետ դառնալ մի այնպիսի անհիւրընկալ, սուլի ենթարկված, անապահով երկիր, ինչպիսին

րից յետոյ ճարահատված՝ բժիշկներին են դիմել, այն էլ ոչ միայն մէկին, երկուսին, այլ մի քանիսին՝ դարձեալ օգնութիւն չեն ստացել: Եւ ուղարկու-թեան արժանին, որ ծաղրելով պատմում են այդ թերահաւատները, այն է, որ «զօլտուրներից» իւրաքանչիւրը տնդրելով միւս «զօլտուրի» զրած դեղատոմսը, ժպտում է եղել և յարակցում թէ՛ «այսպիսի դեղեր չեն օգնի»...

Արհեստաւոր տղէտ է, նախապաշարված է դէպքի «զօլտուրները», չէ հաւատում դիտութեան ներկայացուցիչներին, հասարակ դասակարգը, ամ-բողջ կոյր հակամիտելով է առաջնորդվում. նա խմում, հարբում, շալկում, փչացնում, ծնծում, ծնծվում է, նա վարակվում է վնեւրական ախ-տերով, նա վարակում է իր ընտանիքը, իր կնոջը, իր երեխաներին, նա արատաւորում, աշխատա-վում է ֆիզիկապէս, փչանում է բարոյապէս.— նա այդ անում է անգիտակցաբար, որովհետեւ ու-րիշ կերպ ապրել չը գիտէ, որովհետեւ ուրիշ կեանք չը գիտէ վարել:

Ով պիտի առաջնորդէ դէպքի այդ ուրիշ կեանքը, ով պիտի սպառնացող վտանգի ա-ռաջն առնելու հոգսը քաշէ...

Ն. Գաւթեանց

գնում, ով հանում է, ներս են հրաւիրում:

Արհեստաւորը որ և է հիւանդութեան ժամա-նակ ընդհանրապէս և մասնաւորապէս վնեւրա-կանի ժամանակ դիմում է դաւաքների օգնու-թեան: Դաւաքները հասարակ ժողովրդի ամենա-դէտ բժիշկներն են: Դրանք ամեն տեսակ հիւան-դութիւն ունեցողին ընդունում և ամեն տեսակ ցաւի դարման են անում... Արիւն աւանել, բանկա դնել, աղբուկ կապնել գործա-դրող սովորական միջոցներից դատ, մեր դաւաք-ները և ներքին, և վնեւրական հիւանդութիւններ բուժելու են ձեռնարկում: Նրանք շատ անգամ,—պէտք է խոստովանած,—բժշկում են արտա-քին վերքերը ափող կերպով, ափող աղողութիւնը տալիս է նրանց վստահութիւն, իսկ հասարակ ժողովրդին հաւատ դէպքի դաւաքային բժշ-կութիւնը... Վերադարձնելով բժիշկելով՝ դաւ-աքները կարծում են, թէ կարող են և պէտք է բժշկեն նաև ամեն տեսակ հիւանդութիւններ, և այդպիսով իրանց «դաւաքութիւնը» սկսում են փորձել թշուառ ժողովրդի գլխին:

Ամենից առաջ դաւաք-բժիշկները պայմանա-ւորում են հիւանդի հետ վարձատրութեան կող-մից, որը տրվում է լիովին, սովորաբար բժշկե-լուց յետոյ, նախօրէն տալիս են միայն դեղի փող,

և այդ ամեն անգամ, երբ նոր դեղ է պատրա-սում Այդ սովորութիւնը բաւական նպաստա-ւոր հանգամանք է ներկայացնում դաւաքների համար: Զի՞չէ, թէ է մինչև բժշկելը հիւանդից փող չեն ստանում, թէ է հիւանդը փող չէ տալիս —եթէ չէ առողջանում նրա գործադրած միջոց-ներից, բայց այդ գործադրած դեղերի համար հարկադրված է լինում այնքան փող տալ, որ բե-ղաւում է...

Ահա թէ ինչպէս են հանգամանքից օգտվում դաւաք-բժիշկները: Նրանք շուտ-շուտ փոփոխում են իրանց դեղերը և քանի, երեսուն, քառասուն կօպէկով են վերցնում, որպէս զի ցոյց տան, թէ նոր դեղ են տալիս,—յաճախ այսպիսի խաղախ միջոցների են դիմում: Այսօր տալիս են,—դի-ցուք, մի դեղ, որ դեղին գոյն ունի. նոյն դեղը տալիս են մի երկու օրից յետոյ ուրիշ դեղի ա-նուն տակ, միմիայն մի քիչ գոյնը փոփոխած: Նոյն դեղը այսօր, օրինակ, տալիս են ջրալի, վաղը աւելի պինդ և այլ այսպիսի մի շարք փո-փոխութիւններ, այն նպատակով՝ միմիայն, որ լուր դեղերի համար առանձին-առանձին փող վերցնեն...

Երեւակայեցէք, այս կերպ են վարվում նաև վե-նեւրական հիւանդութիւնների ժամանակ: Այն հի-

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 42а.